

**8.**

**ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**PHILOSOPHY**  
**ФИЛОСОФСКИЕ НАУКИ**

**ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆԻ ՄԻ ՔԱՆԻ**  
**ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ**

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Ժամանակակից աշխարհում առավել մեծ տարածում գտած և մեծ հետաքրքրություն ներկայացնող կրոններից է սինտոն՝ ճապոնական ազգային կրոնը, որն աչքի է ընկնում իր յուրահատկությամբ և ավանդապաշտությամբ: Գաղութացիները աշխարհի այն բացառիկ ժողովուրդներից են, որոնք դարեր ի վեր ձևավորել և սերնդե սերունդ փոխանցել են ազգային հավատալիքների, սովորությունների, ավանդությունների և տոնածիսական արարողությունների յուրատեսակ և միայն իրենց բնորոշ մի համակարգ, որն ընդունված է անվանել սինտո: Այսօր ճապոնիայում սինտոյի հետևորդների թիվը հասնում է մոտ 120 մլն.-ի<sup>1</sup>:

Սինտո տերմինն ունի չինական ծագում և բաղկացած է երկու գաղափարագրերից, որոնք ընթերցվում են *սին*՝ աստված և *տո*՝ ուղի: Այս գաղափարագրերի ճապոներեն համարժեքն է *կամի նո միտի* (աստվածների ուղի)<sup>2</sup>: Առաջին անգամ այս տերմինը հանդիպում է VIII դարում գրի առնված պատմական ժամանակագրության՝ *Նիհոն սյոկիի* (720թ.) մեջ: *Սիները* կամ *կամիները* աստվածներ են կամ ոգիներ, որոնք հին ճապոնացիների պատկերացմամբ բնակեցնում են շրջակա աշխարհը՝ երկինքը, լուսատուները, երկիրը, լեռները, գետերը և ծառերը: Յուրաքանչյուր առարկա կարող է ընկալվել իբրև կամիի մարմնացում, օրինակ՝ քարը: Այդպիսի առարկաները, որոնք կոչվում են *սինտայ* (աստծու մարմին), հիմնականում սրբության խորհրդանշան են և պաշտամունքի օբյեկտ:

Սինտոն փաստացի բարդ և հակասական հավատալիքների ու պատկերացումների միաձույլ համակարգ է, որն իր մեջ ներառել է ճապոնական կղզիներում անհիշելի ժամանակներից բնակություն հաստատած տարբեր ցեղերի բազմատեսակ հավատալիքներն ու դիցաբանական պատկերացումները՝ ավելի ուշ շրջանում համեմված կոնֆուցիականության, դաոսականության և, հատկապես VI դարից սկսած, բուդդայականության տարատեսակ հավատալիքներով, ավանդազրույցներով, հասկացություններով ու ծեսերով: Սինտոյում կարևոր

<sup>1</sup> Տե՛ս История религии. В 2 т., Т. 1, М., 2002, с. 442.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 422.

նշանակություն ունեն կրոնական պաշտամունքն ու արարողությունները, որոնք գրեթե անփոփոխ գոյատևել են մինչ օրս: Սինտոյում պահպանվել են և դեռ շարունակում են կենդանի մնալ վաղ հավատալիքները՝ մոգությունը, շամանականությունը, տոտեմիզմը (օրինակ՝ պահապան կենդանիների երկրպագությունը), ֆետիշիզմը (ամուլետների և թալիսմանների գերբնական հատկությունների վերաբերյալ հավատի տեսքով) և այլն:

Սինտոն ավելի քան 2000 տարիների ընթացքում ունեցել է զգալի ազդեցություն ճապոնական մշակույթի և արժեհամակարգի ձևավորման վրա: Այն ավելին է քան ընդամենը կրոն. այն ճապոնացիների կենսաձևն է և աշխարհընկալումը: Սինտոն կապված է ճապոնական հասարակական կյանքի յուրաքանչյուր օղակի հետ՝ քաղաքականություն, մշակույթ, պատմություն, ընտանիք, հոգևոր կյանք: Տարբեր երևույթներ, որոնք այլ երկրներում բացարձակ զերծ են կրոնական ազդեցությունից, ճապոնիայում կրում են կրոնական որևէ տարր:

Սինտոյի գլխավոր առանձնահատկություններից մեկը պաշտամունքային ոգու՝ կամիի մասին հավատալիքն է: Կամին կարող է ընդունել տարբեր ձևեր, ներկայանալ բնության տարրերի տեսքով, ինչպիսիք են բնության ուժերը, սարերը, արևը և անգամ ծառերը: Կամին ոգի է, գոյ, որը հանդես է գալիս մարդկանց կամ էլ կենդանական ու բուսական աշխարհի տեսքով: Կամին և մարդն իրարից առանձնացված չեն, ընդհակառակը՝ գոյություն ունեն նույն աշխարհում, և մարդը մահանալուց հետո համալրում է կամիների շարքը: Կամին արտահայտում է գոյություն, հետևաբար՝ յուրաքանչյուր երևույթ կամ առարկա ունի կամի: Կամին այն է, ինչն իրին տալիս է յուրահատկություն և ինքնատիպություն, նրան դարձնում յուրատեսակ, մնացածներից տարբեր. կամին այն է, ինչ գտնվում է իրի կամ առարկայի ներսում: Ի տարբերություն աստվածների, որոնք կատարյալ են, կամին օժտված չէ ամենագորությամբ և իդեալական չէ: Այն չի տարբերվում մարդկային բնությունից, թերևս միակ տարբերությունն այն է, որ այն օժտված է ավելի շատ էներգիայով, քան մարդիկ: Կամին աստվածներից տարբերվում է նաև նրանով, որ հանդես է գալիս ոչ միայն դրական, կատարյալ հատկանիշներով, այլև կարող է սխալներ թույլ տալ, լինել չար կամ բացասական<sup>3</sup>:

Սինտոյի հիմնական առանձնահատկություններից է նաև հետմահու կյանքի մասին յուրատեսակ և այլ կրոններից տարբերվող պատկերացումները: Ի տարբերություն այլ կրոնների՝ սինտոյի մեջ բացակայում է հիմնադիր, արարիչ Աստծո գաղափարը: Մարդու և կամիի միաժամանակյա գոյությունը և նրանց միջև հստակ սահմանագծի բացակայությունը դարձել է այն գլխավոր պատճառը, ըստ որի չկա փրկություն այլ՝ այնկողմնային աշխարհում և իդեալականը շրջապատող աշխարհի ու մարդու ներդաշնակ համագոյությունն է և հոգևոր միությունը: Մահը սինտոյի մեջ համարվում է կենարար ուժերի անխուսափելի սպառում, որը, սակայն, կրկին վերածնվում է: Սինտոյի հետևորդները կարծում են, որ մահացածները գտնվում են մեզանից ոչ հեռու և նրանց ոչինչ չի բաժանում մարդկանց աշխարհից: Միևնույն ժամանակ նրանք համոզված են, որ բոլոր կարևոր երևույթները կատարվում են հենց այս աշխարհում, որն ամենալավն է և գերիշ-

<sup>3</sup> Կամիների դիցաբանական և պաշտամունքային առանձնահատկությունների, ինչպես նաև հիմնական հատկանիշների և դասակարգման մասին ավելի մանրամասն տե՛ս *Накорчевский А. А.* Синто, СПб., 2003, с. 63-146.

խող է մյուս բոլոր աշխարհների նկատմամբ:

Այնուամենայնիվ, սինտոյի հիմնական և կարևոր առանձնահատկություններից են բազմազան ծեսերը, որոնք դարերի ընթացքում պահպանվել են գրեթե անփոփոխ<sup>4</sup>: Հարկ է նշել, որ ծեսի կողքին դոգմատիկան զբաղեցնում է բավականին համեստ և աննշան տեղ: Սկզբնական շրջանում սինտոն ընդհանրապես դոգմաներ չի ունեցել, և ժամանակի ընթացքում փոխառնված կրոնական ուսմունքների ազդեցությամբ փորձ է արվել ստեղծել դրանք: Սակայն արդյունքում առաջացել է միայն բուդդայականության, դաոսականության և կոնֆուցիականության յուրատեսակ սինթեզ, որը զոյատևել է սինտոյից անկախ, իսկ սինտոյի հիմքում գլխավորը շարունակել են մնալ սովորույթները: Այս կրոնի հետևորդներից չեն պահանջվում ամենօրյա աղոթքներ և տաճարների հաճախակի այցելություններ: Լիովին բավարար է տաճարական տոնակատարություններին մասնակցելը և կյանքի հայտնի իրադարձություններին նվիրված ավանդական ծեսեր իրականացնելը: Այդ պատճառով էլ շատ ճապոնացիներ սինտոն ընկալում են իբրև ազգային իրադարձությունների և ավանդությունների ամբողջություն: Սկզբունքորեն ոչինչ չի խանգարում սինտոյականին դավանել ուրիշ կրոն կամ ուղղակի լինել նույնիսկ աթեիստ: Այնուամենայնիվ, ավանդույթների և ծեսերի իրականացումը անբաժան է ճապոնացու առօրյա կյանքից՝ ծննդյան պահից մինչև մահ, ուղղակի դա մեծամասամբ չի դիտվում իբրև կրոնականության արտահայտություն:

Սինտոյի վերջնական ձևավորման հարցում մեծ է կայսերական իշխանության դերը, որի լավագույն վկայությունն այն է, որ VIII դարի սկզբին **Պեմմեյ** կայսրուհու հրամանով հավաքվում և խմբագրվում են սինտոյի երկու հիմնական սուրբ գրքերը՝ **Կոճիկի**<sup>5</sup> (հնագույն իրադարձությունների մասին գրառումներ՝ 712թ.) և **Նիհոն սյոկի**<sup>6</sup> կամ **Նիհոնգո** (ճապոնական ժամանակագրություններ՝ 720թ.), որոնք արտացոլում են սինտոյական պաշտամունքային համակարգի ձևավորման դժվարին ուղին և մեզ հասած սինտոյական ամենահին ժողովածուներն են<sup>7</sup>: Այս կարևոր սկզբնաղբյուրների հետ միաժամանակ Պեմմեյ կայսրուհու հրամանով ստեղծվում է ևս մեկ՝ **Ֆուդոկի** ժողովածուն, որը ներկայացնում էր ճապոնական գավառների նկարագրությունը: Հնագույն այդ ֆուդոկիներից մեզ են հասել հինգը, որոնք նույնպես համարվում են ճապոնական դիցաբանական հնագույն շերտերի ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուրներ<sup>8</sup>: Հետագա տարիների ընթացքում այս ժողովածուներին ավելացել են նաև այլ գրքեր, սակայն սինտոյական առասպելների ու դիցաբանական պատկերացումների մեծ մասը արտացոլված է այս ժողովածուներում:

Փաստացի սինտոն կարելի է համարել բազմաստվածային կրոն, որում մեծ տեղ է հատկացվում աստվածների մասին տարատեսակ առասպելներին ու

<sup>4</sup> Ծեսերի մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 147-180:

<sup>5</sup> **Кодзика**. Свиток 1 /Пер. Е. М. Пинус, Свитки 2 и 3 / Пер. со старояп. и коммент. Л. М. Ермаковой и А. Н. Мещерякова. СПб., 1994.

<sup>6</sup> **Нихон сехи** / Пер. со старояп. и коммент. Л. М. Ермаковой и А. Н. Мещерякова. Т. 1-2. СПб., 1997.

<sup>7</sup> Религиоведение. СПб., 2007, с. 117.

<sup>8</sup> **Накорчевский А. А.** Синто, 27.

ավանդազրույցներին:

Սիւնտոյական վաղ շերտի դիցաբանության առանցքը տիեզերածնական պատկերացումներն են, իսկ առասպելների հիմնական հերոսները հնագույն աստվածություններն են: Նիհոնգիում առկա առասպելները հիշեցնում են չինական դաոսական նմանատիպ առասպելները՝ երկնքի և երկրի, **իմ** և **յան** իգական և արական սկզբունքների մասին: Ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տիեզերածնական առասպելները ներկայացնում են ճապոնական կղզիախմունքը հնագույն ժամանակներում բնակեցրած **Յամատո**, **Իծունո** և **Այնու** ցեղախմբերի աշխարհայացքային պատկերացումները՝ երբեմն հակասական, երբեմն միաձուլված և միմյանց լրացնող: Մասնավորապես Յամատո ցեղախմբի առասպելների համաձայն՝ աշխարհակառույցի հիմքում **ավարի երկիրն** է, որից վերև գտնվում է **Եղեզնուտների Միջին երկիրը**, որը բնակեցված է մարդկանցով, տարբեր կենդանիներով և հսկայական թվով աստվածներով: Վերևում **Բարձր երկնքի Յարթավայրն** է, որտեղ ապրում են արևի աստվածուհի **Ամատերասուն** և նրա ենթակաները: Ուշագրավ է, որ այս աշխարհների նկարագրություններում էական տարբերություններ գրեթե չկան, բոլորն էլ միանման են և հիշեցնում են երկիրը: Բարձր երկնքի Յարթավայրում էլ քառսի բաժանման արդյունքում հայտնվում են առաջին երեք աստված-կամինները, որոնք աստվածային էություններ էին՝ առանց սեռի և արտաքին նշանների: Այնուհետև ծնվում են ևս վեց աստվածներ, որոնք արդեն ավելի առարկայական են: Ըստ ճապոնական առասպելների՝ այդ պահից սկսած սկսում են առաջանալ առաջին աստվածային զույգերը, որոնցից աշխարհածնության մեջ կարևոր դերակատարություն են ստանձնում **Իծանագին** և **Իծանամին**<sup>9</sup>: Այս երկու աստվածներից է սկսվում ճապոնական դիցաբանական իրադարձությունների մանրամասն նկարագրությունը: Աստվածային այս զույգը ստեղծում է ճապոնական կղզիները, որոնցից յուրաքանչյուրի համար առկա է առանձին առասպել: Այս աստվածները նաև ծնում են առաջին կամի-աստվածներին, որոնք բնակեցնում են երկիրը կամ դառնում են ճապոնական կղզիներ: Աստվածներից վերջինը ծնվում է կրակի աստված **Կագուցուտին** (Առկայծող կրակի ոգի), որն այրում է մոր՝ Իծանամիի որովայնը, և նա մահանում է ահավոր տանջանքների մեջ՝ հայտնվելով **Դեդին Ակունքների երկրում**<sup>10</sup>: Այսպես առաջին անգամ երկիր է գալիս մահը, որի իշխանությամբ ենթարկվում են նույնիսկ աստվածները: Բարկացած Իծանագին սպանում է Կագուցուտինին, և նրա արյունից առաջանում են բազմաթիվ աստվածներ, որոնք դառնում են ճապոնիայի հրաբուխների մարմնացումները:

Տիեզերածնական առասպելներին այնուհետև հաջորդում են նորագույն շերտի դիցաբանական պատկերացումները, որոնք սկսում են կենտրոնանալ երկու գլխավոր աստվածությունների՝ Ամատերասուի և Սուսանոոի շուրջ:

Փաստորեն Կոձիկիի և Նիհոնգիի զրույցները սկսում են արտացոլել միջցեղային ոչ հարթ հարաբերությունները, որոնք արտացոլվում են **Ամատերասուի** և **Սուսանոոյի** երկարատև պայքարի տեսքով<sup>11</sup>: Կոձիկիում Սուսանոոն և Ամա-

<sup>9</sup> Մանրամասները տե՛ս նույն տեղում, էջ 27-40:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 41-42:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 44-47:

տերասուն ներկայանում են իբրև անհաշտ քույր ու եղբայր: Սուսանոոն դառնում է գլխավոր աստվածուհու հակառակորդը: Երկու հզոր աստվածությունների հակամարտությունը լուծվում է նրանով, որ Ամատերասուն հաղթում է և դառնում ճապոնական կայսրերի նախամայր, իսկ նրա թոռ **Նինիգի-ճո միկոտոն**, երկնքից իջնելով, դառնում է առաջին կայսրը: Հարկ է նշել, որ որոշ առասպելներ Ամատերասունին, բացի արեգակնային գործառույթներից, օժտում են նաև երկրագործության հովանավորության խորհրդանշաններով: Նա ինքն է հետևում բրնձի սեփական արտերին և կազմակերպում առաջին բերքի տոնը:

Ճապոնական դիցաբանության երկրորդ փուլի առասպելներում կարևոր տեղ է հատկացվում նաև նոր աստվածային սերունդների առաջացման պատմությանը, որոնցից ամենահայտնին սննդի և հատիկի աստվածուհի **Ինարին** է: Նրա պաշտամունքը լայնորեն տարածված էր երկրագործների շրջանում, իսկ առևտրային հարաբերությունների զարգացմանը և դրամների գործածության առաջացմանը զուգընթաց, նրա պաշտամունքը տարածվեց նաև քաղաքներում:

Ամատերասուի թոռ **Նինիգիի** երկրի տիրակալ դառնալուց հետո սկսվում է առասպելների երրորդ փուլը: Կոձիկիի համաձայն Ամատերասուն թոռանը տվել է կայսերական իշխանության խորհրդանշանները՝ զարու գեղեցիկ մանյակը և սրբազան հայելին, ինչպես նաև Սուսանոոյի սուրը<sup>12</sup>: Այդ առարկաները հետագայում դառնում են ճապոնական կայսրերի խորհրդանիշները:

Երկնքից իջնելով Նինիգին հայտնվում է Ցուկուսի (Կյուսյու) կղզում: Երկրի վրա նա ամուսնանում է և ծնում երեք որդիներ, որոնք ևս դարձել են առասպելների հերոսներ: Այդ որդիներից Հոորին ծնում է **Չիմնու-տենոյին** (աստվածային ռազմիկ)՝ Ճապոնիայի առաջին մահկանացու կայսրը: Կոձիկիի համաձայն նա Կյուսյու կղզուց արշավում է դեպի Հոնսյու, որպեսզի իրեն ենթարկի այդ տարածքները: Դա տեղի է ունեցել մ. թ. ա. 660 թ. փետրվարի 11-ին: Չիմնուի կառավարման սկիզբը ճապոնացիները, 1871 թ. սկսած, երկար տարիներ նշում էին իբրև մեծ տոն: 1945 թ. այն վերացվեց և 1966 թ. նորից վերականգնվեց, սակայն կոչվեց պետականության հիմնադրման տարեդարձ<sup>13</sup>:

Այս առասպելներով ավարտվում են ճապոնական դիցաբանության հնագույն շերտի առասպելները: Կոձիկիի և Նիհոնգիի մյուս գլուխները ներկայացնում են արդեն Ճապոնիայի երկրային կիսաառասպելական պատմությունը, որում շարունակում են կարևոր դերակատարություն ունենալ կամի-աստվածները:

VI դարում Ճապոնիա ներթափանցած բուդդայականությունը ևս սինտոյի ձևավորման մեջ մեծ դեր է խաղացել: Այն անմիջապես մեծ տարածում գտնելով՝ գրավում է մտավորականության և վերնախավի ուշադրությունն ու համակրանքը: Իշխանությունները ամեն կերպ փորձում էին աջակցել բուդդայականության և սինտոյի համագոյությանը: Ի տարբերություն սինտոյի, որի հիմնական մասը կազմում են կրոնական արարողությունները և պաշտամունքը, բուդդայականությունն ուշադրությունը ավելի շատ կենտրոնացնում է մարդու հոգևոր ներաշխարհի վրա: Սա էր պատճառը, որ այս երկու կրոնների միացումը տեղի ունեցավ միմյանց լրացնելու ճանապարհով:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 55-57:

<sup>13</sup> Տե՛ս История религии. В 2 т., Т. 1, М., 2002, с. 438-440.

Սկզբնական շրջանում կամին համարվում էր բուդդայականության հովանավոր, իսկ հետագայում առաջ եկավ այն գաղափարը, որը կամին ևս փրկության կարիք ունի, փրկություն, որը տեղի էր ունենալու բուդդայական ուսմունքի օգնությամբ: Սինտոյական տաճարների տարածքում ստեղծվում են բուդդայական աղոթատներ, իսկ բուդդայական աղոթքները և սուրբգրային տեքստերը կարդացվում էին սինտոյական տաճարներում: Արդյունքում գրեթե բոլոր սինտոյական տաճարները (բացառությամբ երկու կարևոր տաճարների՝ *Իծունոյի* և *Իսե-ի*) կարծես բուդդայականության և սինտոյի ավանդույթների ամբողջությունն լինեին:

IX-XI դարերում բուդդայականությունը դառնում է ճապոնիայի պետական կրոն: Այս ժամանակահատվածում կայսերական աթոռը գրեթե կորցնում է իր իրական իշխանությունը: Մոտավորապես XII դարում իշխանության է գալիս ֆեոդալական բռնապետությունը՝ այդուհանդերձ գլխավորությամբ, որոնց ձեռքում էր կենտրոնացած երկրի ողջ իշխանությունը: Բուդդայականության գերիշխող դիրքը զգալի է դառնում բոլոր բնագավառներում: Միաժամանակ բուդդայական դպրոցներում առաջանում են սինտո-բուդդայական ուսմունքներ, որոնցում սինտոյական աստվածները համարվում էին տիեզերական Բուդդայի դրսևորման ձևեր:

Բուդդայականությունը պետական կրոն է համարվել մինչև 1868 թ., սակայն պատմության առանձին ժամանակահատվածներում, երբ ազգի միավորման խնդիր է առաջացել, սինտոյի դերն ու նշանակությունը զգալիորեն մեծացել է: **Մեյջիի** հեղափոխությունը 1868 թ. նոր շունչ հաղորդեց ճապոնիայի կրոնական իրավիճակին: Այս հեղափոխությունը նպատակ ուներ նոր ճապոնիայի համար կրոնական հավատալիքներ առաջարկել և աջակցել կենտրոնական իշխանությանը: Արդյունքում սինտոն ամբողջությամբ վերակազմավորվում, վերափոխվում է, առանձնանում բուդդայականությունից և մտնում պետական կառավարման համակարգ: Ամատերասուն կենտրոնական դիրք է գրավում, իսկ միապետը ճանաչվում է ոչ միայն պետական, այլև հոգևոր ղեկավար: Այսպիսով անցում է կատարվում երկրի կառավարման յուրատեսակ աստվածապետական համակարգի: Սինտոն դառնում է ճապոնիայի պետական կրոն, և հոգևորականները սկսում են ֆինանսական աջակցություն ստանալ պետությունից:

Սակայն հեղափոխական այս շարժումը և սինտոյի «մաքրման» փորձը երկար չտևեցին: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում սինտոյական տաճարները աստիճանաբար ձեռք բերեցին բուդդայական տարրեր՝ ճարտարապետական, դավանաբանական և գաղափարական առումներով:

1882 թ. ճապոնիայի կառավարությունը ընդունում է կրոնական ազատության մասին օրենքը, որը թույլ էր տալիս յուրաքանչյուր մարդու դավանելու իր նախընտրած և իրեն հոգեհարազատ կրոն, իսկ սինտոն շարունակում էր հանդես գալ իբրև պաշտոնական գաղափարախոսություն: Ճապոնացիների եզակիության մասին ուսմունքը դառնում է պարտադիր առարկա բոլոր ուսումնական հաստատություններում: Երկրի ամբողջ տարածքով տարածվում է կայսերը երկրպագելու սովորությունը: Ստեղծվում են մի շարք նոր պետական տոներ, որոնցից հատկապես պետք է առանձնացնել թագավորի պաշտոնավարման տարելիցը, թագավորի ծննդյան օրը, *Գեմմեյ* կայսրուհու և *Ջիմմու* կայսեր հիշա-

տակման օրերը: Այս տոների ժամանակ դպրոցներում աշակերտները խոնարհվում էին կայսեր և կայսրուհու նկարներին, պարտադիր էր պետական հիմնի կատարումը: Ճապոնաչինական (1894-1895 թթ.) և ռուս-ճապոնական (1904-1905 թթ.) պատերազմների տարիներին սինտոն դառնում է բանակի և զորքի գաղափարախոսությունը: Նրանք, ովքեր պատերազմի դաշտում զոհվում էին, համարվում էր, որ դառնում էին կամի, և նրանց պատվին կառուցվում էին նոր տաճարներ:

Սինտոյի զարգացման նորագույն շրջանը կապված է Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ: Երկրորդ աշխարհամարտում ճապոնիայի պարտությունից հետո սինտոն դադարեց պետական կրոն համարվել: Կրոնական ազատությունը ճապոնիայում ապահովվեց Սահմանադրությամբ, 1951թ. ընդունվեց Կրոնական համագործակցության օրենք: 1946 թ. իր ամանորյա ուղերձում ճապոնիայի կայսր Չիրոհիտոն հրաժարվեց իր աստվածային ծագումից: 1947թ. Սահմանադրությամբ փոխվեց նրա կարգավիճակը, նա հռչակվեց «պետության և ազգի միասնության խորհրդանիշ»<sup>14</sup>: Նույն թվականին ստեղծվեց Սինտոյական սրբավայրերի ասոցիացիան, որը հնարավորություն տվեց պահպանել սրբավայրերի կառավարման միակ կենտրոնացված համակարգը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճապոնացիների թիվը, ովքեր հաստատում էին իրենց սինտոյական պատկանելությունը, սկսեց կտրուկ նվազել: Սակայն այդ փաստը ամենևին էլ չանդրադարձավ սինտոյական ծեսերի վրա, քանի որ դրանք շարունակեցին կատարվել, բայց արդեն ավելի շատ մշակութային սովորույթների և համայնքային ծեսերի անվան տակ: Ամեն դեպքում, սինտոյական ծեսերն ու արարողությունները այսօր էլ մարդաշատ են լինում, որի պատճառը թերևս այն է, որ սինտոն, դադարելով պետական կրոն լինելուց, անցում կատարեց դեպի ավանդական ազգային կրոնի դիրքեր և ավելի շատ կրում է մշակութային տարրեր: Չնայած, որ սինտոն այլևս պետական կրոն չի համարվում, նրա արժեքային համակարգը և գաղափարախոսությունը մինչ օրս էլ շարունակում են լինել ճապոնիայի բնակչության ազգային մտածելակերպի և հոգևոր մշակույթի կարևորագույն բաղադրիչները: Պատահական չէ, որ ճապոնական մշակույթը բացառապես ազդված է սինտոյից, դեռ ավելին՝ ճապոնական ավանդույթների և սովորույթների մեծ մասն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապ ունի սինտոյի հետ:

## НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ НАЦИОНАЛЬНОЙ ЯПОНСКОЙ РЕЛИГИИ

*П. А. БАРСЕГЯН*

В современных национальных религиях выделяется национальная религия японцев - синто, особенности и основные исторические фрагменты развития которого рассматриваются в статье. Главная особенность синто - культ - камни, космогенные мифы и представления о божественном происхождении императорской власти.

<sup>14</sup> Տե՛ս Իստորյա ռելիգիւ. Ե 2 տ., Դ. 1, Մ., 2002, շ. 440-441.

SEVERAL PECULIARITIES OF THE JAPANESE NATIONAL RELIGION  
SUMMARY

P. A. BARSEGHYAN

Shinto, the national religion of Japanese differs from the modern national religions. The article touches upon several peculiarities and the main scenes of its historical development. The worship of camins , the legends of space and the notions about the divine origin of imperial power are distinguished from the main peculiarities of Shinto.

## ՇԻՎԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պ. Ա. ԲԱՐՍԵԳԻԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ժամանակակից աշխարհում առավել հայտնի և զարգացած կրոններից մեկը Յնդկաստանի ազգային կրոն հինդուիզմն է, որի հետևորդների թիվը հասնում է մոտ մեկ մլրդ.-ի: Իբրև կրոնական ֆենոմեն՝ հինդուիզմը առանձնանում է բարդությամբ և հակասականությամբ, խճճվածությամբ ու քառայնությամբ: Լայն իմաստով հինդուիզմը ոչ միայն և ոչ այնքան կրոն է, որքան կենսակերպ և վարքագծի ամբողջական չափանիշ: Յինդուիզմի կրոնական համակարգն իր մեջ զուգակցում է իրար հակադրվող ծայրահեղություններ, հարմարվում է ամենաբազմազան պայմաններին, միավորում բազմազան և տարատեսակ հավատալիքներ, ձևավորում կրոնափիլիսոփայական բարդ համակարգեր՝ միաժամանակ հանդես գալով իբրև բազմաթիվ ուղղությունների ամբողջություն:

Ժամանակակից հինդուիզմում առանձնանում են երկու հիմնական ուղղություններ՝ **վիշնուականությունը և շիվայականությունը**, որոնք համախմբում են հավատացյալ հինդուիստների ճնշող մեծամասնությանը: Երկու ուղղություններն էլ ձևավորվել են հազարամյակների ընթացքում՝ ներառելով տարբեր պաշտամունքներ ու առասպելներ, տարբեր աստվածությունների կրոնադիցաբանական հատկանիշներ ու գործառույթներ: Յինդուիզմի այս հիմնական ուղղությունների կենտրոնական պաշտամունքային օբյեկտները երկու խոշոր աստվածություններ են՝ Վիշնուն և Շիվան, որոնք Բրահմայի հետ միասին կազմում են հինդուիստական գլխավոր պաշտամունքային եռաստվածային համակարգը՝ **տրիմուտրին**<sup>1</sup>: Ավանդաբար Բրահման համարվում է արարիչը, Վիշնուն օժտված է պահպան, իսկ Շիվան կործանիչ հատկություններով, սակայն այդ երեք բնութագրումները լիարժեքորեն և ամենայն մանրամասնություններով չեն ներկայացնում այս երեք աստվածությունների իրական կերպարն ու հատկական գծերը, ուստի այսօր էլ արդիական է հինդուիստական աստվածությունների պաշ-

<sup>1</sup> Յինդուիզմի և տրիմուտրիի մասին առավել մանրամասն տե՛ս Encyclopedia of Religion, Second Edition, 2005, Thomson Gale, p. 3988-4008.